Հաստատում եմ

<<Մղարթի հիմնական դպրոց>> ՊՈԱԿ-ի

Տնօրեն՝ Ա. Մոսինյան

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ <<ՄՂԱՐԹԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ ՏՆՕՐԵՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

2022 – 2023 ՈՒՍ ՏԱՐԻ

2022-2023 ուստարին կարելի է որակել որպես դպրոցի բոլոր բնագավառներում կատարված աշխատանքների արդյունավետու առաջադիմական տարի:
2022-2023 ուսումնական տարում տնօրենի պարտականություններս իրականացրել եմ առաջնորդվելով Մղարթի հիմնական դպրոցի կանոնադրության 48-րդ կետի ինձ վերապահված պահանջներով: Հիմք ընդունելով Մղարթի հիմնական դպրոցի զարգացման ծրագիրն ու 2022-2023 ուստարվա ընդհանուր աշխատանքային պլանը՝ ուսումնական տարվա սկզբին կազմել, մանկխորհում քննարկել և հաստատման եմ ներկայացրել մանրամասն տարեկան աշխատանքային պլան՝հաշվի առնելով անցած ուսումնական տարվա խնդիրները և տարեվերջյան մեթոդմիավորումների նիստերի քննարկումները: ՈՒսումնական տարվա գործունեությունս իրականացրել եմ ղեկավարվելով հիշյալ աշխատանքային պլանով, որի հիման վրա կազմվել է աշխատանքային պլաններ՝ հաշվի առնելով նաև ընթացիկ ծագած հարցերը:
2022-2023 ուստարվա սկզբին դպրոցում սովորողների ընդհանուր թիվը կազմել է 13 աշակերտ, և ավարտելու են 2 աշակերտ:
2022-2023 ուստարում նախատեսվում է իրականացնել ներքոնշյալ աշխատանքները.

- Ծավալել գործնական աշխատանք կրթության որակի բարձրացման ուղղությամբ:
- Մասսայականացնել լավագույն մանկավարժների առաջավոր փորձը:
- Առանձնահատուկ ուշադրություն դարձնել դպրոցի բարոյահոգեբանական առողջ միջավայրի ձևավորմանը:
- Մշտապես խրախուսել ուսուցիչ-աշակերտ, ուսուցիչ-տնօրեն, դպրոց-ծնող փոխհարաբերությունները:
- Ուշադրության կենտրոնում պահել բոլոր մանկավարժական աշխատողների ատեստացիայի կազմակերպումը և ապահովել օրենքով սահմանված կարգով նրանց վերապատրաստման գործընթացը:

I ԲԱԺԻՆ

հ/հ	Աշխատանքի բովանդակություն	Կատարման ժամկետ	Կատարող անձ	Նշումներ կատարման մասին
1	2	3	4	5
1	Տնօրենին կից խորհրդակցություն Օրակարգ ա/ նոր ուսումնական տարվա նախապատրաստական աշխատանքների բաժանում	19.08.2022-9.09.2022	Տնօրեն	
2	Առաջին դասարանցիների ընդունելություն	31.08.2022	Տնօրինություն	
3	Առաջին դասարանցիների ծանոթացում դպրոցի ներքին կարգապահական կանոններին:	01.09.2022	Տնօրեն, դասվար	
4	Համավարակով պայմանավորված ախտահանման աշխատանքների կազմակերպում	Ուսումնական տարում	Տնօրեն,հավաքարար	
5	Աշխատանքային կարգապահության կանոնների հաստատում:	19.08-15.09. 2022	Տնօրեն	

6	Խիստ վերահսկողություն սահմանել ուշացումների և անհարգելի բացակայությունների նկատմամբ, ժամանակին կանխել դրանք:	Ուսումնական տարում	Տնօրեն, դասղեկներ	
7	Մեծացնել ծնողական խորհրդի դերը և ապահովել ակտիվ մասնակցությունը դպրոցի կառավարման,ուսուցման գործընթացում	սեպտեմբեր	Տնօրեն , դասղեկներ	

II ԲԱԺԻՆ

Աշխատանք մանկավարժական աշխատողների հետ

հ/հ	Աշխատանքի բովանդակություն	Կատարման ժամկետ	Կատարող անձ	Նշումներ կատարման մասին
1	2	3	4	5
1	Կազմակերպել և ղեկավարել սովորողների ուսումնադաստիրակչական,արտադպրոցական,արտադասարանական աշխատանքները և դասղեկների գործունեությունը,հստակեցնել յուրաքանչյուրի գործառույթները,աշխատանքային պլանները հաստատել	01.09-15.09. 2022	Տնօրեն	
2	Նշանակել դասղեկներ, մասնախմբերի ղեկավարներ	01.09. 2022	Տնօրեն	
3	Անցկացնել մասնախմբերի ղեկավարների սեմինար խորհրդակցություն:Նրանց ծանոթացնել մասնախմբերի կանոնադրությանը, որոշել հետագա անելիքները:	սեպտեմբեր	Տնօրեն	
4	Ուսումնասիրել ուսուցիչների առաջավոր աշխատանքի փորձը և հանձնարարել բոլոր առարկաներից անցկացնել առաջավոր փորձի դասեր:	ուսումնական տարվա ընթացքում	Տնօրեն, մ/մ նախագահներ	
5	Կազմակերպել ՏՀՏ վերապատրաստումներ՝ առցանց գործիքների տիրապետում	ուսումնական տարվա ընթացքում	Տնօրեն, օպերատոր	

6	Կազմակերպել սկսնակ ուսուցիչներին մեթոդական օգնություն տալու գործընթացը և նրանց կցել փորձառու ուսուցիչների հետ:	ուսումնական տարվա ընթացքում	Տնօրեն , մ/մ նախագահներ	
7	Ուսուցիչներին հաղորդակից դարձնել գիտության և մանկավարժության նորագույն նվաճումներին:	ուսումնական տարվա ընթացքում	Տնօրեն	
8	Ուսուցիչներին ծանոթացնել ՀՀ կառավարության որոշումներին, գիտության ու կրթության նախարարության հրահանգներին , հրամաններին և այլ նորմատիվ փաստաթղթերին:	ուսումնական տարվա ընթացքում մանկավարժական խորհրդի նիստի ժամանակ	Տնօրեն	
9	Պլանավորել մանկավարժական խորհրդի գործունեությունը:	01.09.2022	Տնօրեն	
10	Կազմակերպել մեթոդական օգնություն ուսուցիչների մասնագիտական որակավորման համար	ուստարվա ընթացքում	Տնօրեն	

III ԲԱԺԻՆ

Ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպում

հ/հ	Աշխատանքի բովանդակություն	Կատարման ժամկետ	Կատարող անձ	Նշումներ կատարման մասին
1	2	3	4	5
1	Ուսուցիչներին տեղեկացնել ուսումնական ծրագրերի,չափորոշիչների և փոփոխությունների մասին:	սեպտեմբեր	Տնօրեն	
2	Ապահովել աշակերտներին դասագրքերով	սեպտեմբեր	Տնօրեն, գրադարանավար	
3	Սովորողների գիտելիքների որակը բարելավելու նպատակով կատարել դասալսումներ, արդյունքները քննարկել մասնախմբերի նիստերում տնօրենին կից խորհրդակցություններում, մանկխորհրդի նիստերում:	ուսումնական տարվա ընթացքում	Տնօրեն	
4	Մասնախմբերի օգնությամբ ուսումնասիրել առարկաների դասավանդման վիճակը և արդյունքները քննարկել մասնախմբերի նիստերում տնօրենին կից, խորհրդակցություններում, մանկխորհրդի նիստերում:	ուսումնական տարվա ընթացքում	Տնօրեն,մ/մ նախագահներ	
5	Անցկացնել դպրոցական օլիմպիադաներ:	ըստ ժամանակացույցի	տնօրինություն	
6	Հետևել «emis.am»-ի աշխատանքներին:	շաբաթը 1 անգամ	Տնօրեն, օպերատոր	
7	Կիսամյակի ընթացքում առնվազն երկու անգամ բոլոր առարկաներից կազմակերպել թեմատիկ ստուգումներ տնօրինության ներկայացուցչի կամ մ/մ մասնախմբի ղեկավարի մասնակցությամբ:	ուս. տարվա ընթացքում	Տնօրեն , մ/մ նախագահներ	

IV ԲԱԺԻՆ

Ներդպրոցական վերահսկողություն

հ/հ	Աշխատանքի բովանդակություն	Կատարման ժամկետ	Կատարող անձ	Նշումներ կատարման մասին
1	2	3	4	5
1	Յուրաքանչյուր ամսվա վերջում հանրագումարի բերել սովորողների ուշացումներն ու բացակայությունները և արդյունքները քննարկել տնօրենին կից խորհրդակցություններում:	յուրաքանչյուր ամսվա վերջում ամբողջ տարվա ընթացքում	Տնօրեն, դասղեկներ	
2	Ստուգել հիմնական պարտադիր կրթության օրենքի կատարման վիճակը դպրոցում՝ ելնելով հանրակրթական հաստատության կանոնադրության պահանջներից և արդյունքները քննարկել տնօրենին կից խորհրդակցություններում:	ուսումնական տարվա ընթացքում	Տնօրեն	
3	Ստուգել ավարտական դասարանների սովորողների գիտելիքների որակի համապատասխանությունը պետական չափորոշիչներին ու նորմերին:	1-ին, 2-րդ կիսամյակների ավարտին	Տնօրեն	

V ԲԱԺԻՆ

Աշխատանք ծնողների հետ

հ/հ	Աշխատանքի բովանդակություն	Կատարման ժամկետ	Կատարող անձ	Նշումներ կատարման մասին
1	2	3	4	5
1	Ձևավորել դպրոցի ծնողական խորհուրդ և քննարկել դպրոցի առջև դրված համատեղ լուծման ենթակա հարցեր:	1.09.2022-5.09.2022	Տնօրեն, դասղեկներ	
3	Պլանավորել ծնողական խորհրդի աշխատանքները:	16.09.2022	Տնօրեն, դասղեկներ	
5	Ապահովել դպրոցի և ծնողների համատեղ գործունեությունը սովորողների ուսուցման և դաստիարակության բարելավման համար:	ուսումնական տարվա ընթացքում	Տնօրեն	